

ԹԵԹԿ ՄՏԱՎՈՐ ՀԵՏԱՄՆԱՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆԸ

Միքայելյան Ա. Վ.

Խաչատուր Աբովյանի անվան հայական պետական մանկավարժական համալսարանի մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու

Հանգուցային բառեր և արտահայտություններ. ուղղագրական կարողություններ, վերլուծահամադրական ունակություն, հնչյունային լսողություն, հոգեկան գործընթացներ:

Մեր խորին համոզմամբ՝ ուսումնական գործընթացում իրականացրած ցանկացած գործունեության վերջնարդյունքը մեծապես պայմանավորված է նաև այն նախապատրաստական աշխատանքով, որը նախորդում է դրան: Անսխալ գրելու, մասնավորապես, ուղղագրական կարողության ձևավորման ուղղությամբ աշխատանքը պետք է սկսել դեռևս դպրոցական ուսուցման առաջին իսկ օրերից: Այսպես, գրաճանաչության նախաայբբենական շրջանում, ի թիվս այլ խնդիրների, ճիշտ գրելու կարողության ձևավորման նպատակով մեծ տեղ պետք է տալ մտավոր հետամնացություն ունեցող երեխաների **վերլուծահամադրական ունակությունների զարգացմանը**, որը, ինչպես հայտնի է, այդ կարողության հիմքն է: Հատկանշական է, որ մտածողության նշված բաղադրիչի զարգացածության մակարդակով է պայմանավորված մարդու ողջ գործունեությունն ընդհանրապես: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մտավոր հետամնաց երեխաների՝ վերը նշված կարողու-

թյունը խիստ թերի է՝ պայմանավորված գլխուղեղի օրգանական վնասվածքով:

Վերլուծահամադրական կարողությունների զարգացման նպատակով հատկապես մեծ տեղ ենք տալիս հնչյունների տարբերական ուղղությամբ սովորողների ունակության ձևավորմանը: Սկզբնական շրջանում առաջարկում ենք վարժություններ՝ վանկային մակարդակով: Օրինակ՝ ուսուցչից հետո արտասանել մեկ բաղաձայնով իրարից տարբերվող վանկերի շարքը (սա-գա-սա, շա-սա-սա, րա-ռա-րա և այլն), արտասանել և համեմատել այն բառերը, որոնք իրարից տարբերվում են մեկ կամ երկու հնչյունով (լար-լոր-լուր, բառ-բուռ-բեռ, նավ-նուռ-նոր և այլն): Կամ՝ «Տրված բառերից առանձնացնել և արտասանել առաջադրվող հնչյունով սկսվողը, վերջացողը»: «Բառախմբից առանձնացնել և անվանել այն բառը, որի մեջ լսվում է տրված հնչյունը»: «Տրված բառերին ավելացնել համապատասխան հնչյուն և ստացված նոր բառերն արտասանել»: Այս գործընթացում հատկապես կարևորում ենք, որ առաջադրանքները մտավոր հետամնացություն ունեցող սովորողների կողմից կատարվեն ոչ թե մեխանիկորեն, այլ իմաստավորվեն: Այդ նպատակով վարժությունների

կատարման ընթացքում ուսուցիչն անընդհատ հարցեր պետք է տա երեխաներին՝ ուղղորդելով իմաստավորելու իրենց լսածն ու ասածը: Չուգորդումների ապահովման նպատակով առաջարկում ենք գործածել գննական հենքեր (նախադասությունների, բառերի, վանկերի, հնչյունների գծապատկերներ, որոնցում գույներով առանձնացված են ձայնավոր և բաղաձայն հնչյունները և այլն):

Վերը նշված աշխատանքներն է՛լ ավելի արդյունավետ են դառնում, երբ դրանք անցկացվում են խաղային հնարներով [2]:

Առանց **հնչյունային լսողության** զարգացման որոշակի մակարդակի ձեռքբերման հնարավոր չէ իրականացնել գրելու գործընթացը: Գլխուղեղի օրգանական վնասվածքը, մասնավորապես լսողական զգայարանի շրջանում, մտավոր հետամնաց երեխաների՝ շրջապատողների խոսքի հնչյունները տարբերակել չկարողանալու պատճառ է դառնում: Սա չի նշանակում, թե մտավոր հետամնաց երեխան ունի ֆիզիկական լսողության կորուստ կամ պակաս, ընդհակառակը, նա կարող է լսել նույնիսկ շատ ցածր ձայները, պարզապես նա դժվարությամբ է ընկալում իրեն ուղղված կապակցված խոսքը, դժվարանում է դրանում առանձնացնել բառերն ու հնչյունները: Հետևաբար, հատկապես գրաճանաչության նախաայբբենական շրջանում, հնչյունային լսողության զարգացման նպատակով կազմակերպված խաղերն ու վարժությունները պարբերական բնույթ պետք է կրեն: Դրանցից են, օրինակ՝ «Ձայնի՛ց գուշակիր առարկան», «Ու՛մ ձայնն է», «Ո՞վ

է լավ լսում», «Բառաշղթա» և այլ խաղեր ու վարժություններ, որոնք նկարագրված են մի շարք հեղինակների ձեռնարկներում [1, 2, 3]:

Քանի որ մեծ է նաև **հոգեկան բոլոր գործընթացների**, մասնավորապես՝ մտածողության, հիշողության, ուշադրության դերը մայրենի լեզվի ուղղագրության յուրացման համար, հետևաբար, դրանց շտկման և զարգացման գործը նախապատրաստական շրջանի ամենօրյա աշխատանքների կարևոր բաղադրիչը պետք է լինի:

Աշակերտների մտածողության զարգացման նպատակով նախաայբբենական շրջանում առաջարկում ենք փայտիկներով (լուցկու հատիկներով) տարաբնույթ առաջադրանքներ և վարժություններ. տրված թվով փայտիկներից հավաքել տարբեր պատկերներ (քառակուսի, եռանկյունի), այնուհետև տեղափոխել դրանք այնպես, որ ստացվի մեկ ուրիշ պատկեր: Կամ՝ առանց ընդհատելու մի քանի կետերի միացումը մեկ գծով: Շահեկան է նաև պարզ հանելուկների, շփոթուկների, տրամաբանական գլուխկոտրուկների առաջադրումը:

Հիշողությունը ևս՝ որպես հոգեկան գործընթաց, կարևոր դեր ու նշանակություն ունի մտավոր հետամնաց երեխաների ոչ միայն ճիշտ գրելու կարողության ձևավորման, այլև ողջ ուսումնական գործընթացի համար: Հոգեբանները պայմանականորեն առանձնացնում են տեսողական, շարժողական, լսողական և տրամաբանական հիշողության ձևեր: Սակայն իրական պայմաններում դրանք դժվար է տարանջատել, քանի որ թե՛ իրական և թե՛ հատկապես ուսումնական գործունեության ըն-

թացքում դրանք հանդես են գալիս միասնաբար կամ տարաչափ համադրությամբ: Համեմայնդեպս, հիշողության նշված տեսակները թե՛ առանձին վերցրած և թե՛ որոշակի համադրություններով կարևոր նշանակություն ունեն ճիշտ գրելու կարողությունների զարգացման համար: Օրինակ՝ տեսողական հիշողությունն անհրաժեշտ է մասնավորաբար ավանդական ուղղագրությանը պատկանող բառերի գրության ուսուցման ընթացքում, լսողական հիշողությունը՝ բառային հրահանգների ընկալման և թելադրությամբ բառերի (տառերի) ճիշտ գրության համար, տրամաբանականը՝ բառերի իմաստավորված հերթականությունը մտապահելու համար և այլն: Հետևաբար, նշված բոլոր ուղղություններով աշխատանքները պետք է լինեն համակարգված ու կրեն պարբերական բնույթ:

Երեխաների տեսաշարժողական հիշողության զարգացման համար առաջադրել ենք վարժություններ՝ տրված օրինակի հիման վրա՝ դրանք կազմակերպելով որոշակի փուլերով. սկզբում երեխան կատարում է առաջադրանքը՝ օրինակն անընդհատ ունենալով իր տեսադաշտում, այնուհետև տրված օրինակի դիտման ժամանակահատվածը կրճատվում է 15-20 վայրկյանով, սակայն այնպես, որ երեխան հասցնի դիտել և մտապահել տրված օրինակը: Նման վարժությունները, ըստ մեր դիտարկումների, նպատակահարմար է կազմակերպել գործունեության այնպիսի տեսակների ընթացքում, ինչպիսիք են նկարչությունը, ծեփը, տառամասնիկների արտագրությունը գրատախտակից, կառուցո-

ղական աշխատանքները և այլն: Մեր կողմից կազմակերպված նմանատիպ աշխատանքների ընթացքում նկատել ենք, որ մտավոր հետամնաց երեխաները հատկապես հաճույքով են կատարում աշխատանքի այն ձևերը, որոնք վերաբերում էին երկու նման նկարների տարբերությունները և հակառակը՝ երկու պատկերների նմանությունները գտնելուն, սակայն, ինչ խոսք, այստեղ ևս հուշումներն ու օգնությունն անխուսափելի էին:

Տեսողական հիշողությունը զարգացնելու նպատակով առաջարկում ենք հետևյալ առաջադրանքները.

- Մտապահել 2, 3 առարկայական նկարներ, հետո դրանք առանձնացնել 7, 8 նկարների միջից (նույնը կարելի է անել թվերով, երկրաչափական պատկերներով):
- Ուշադիր նայել նկարների (թվերի, պատկերների) հերթականությանը, տեղերը խառնելուց հետո դարձյալ սկզբնական հերթականությամբ դասավորել:

Շատ ավելի բարդ էր մտավոր հետամնաց երեխաների տրամաբանական հիշողությունը զարգացնող աշխատանքների իրականացումը, քանի որ հիշողության այս տեսակը պայմանավորված է ուսումնական նյութի ընկալումով: Հետևաբար, այս ուղղությամբ աշխատանքների կազմակերպումն անհնար է առանց տեսողական և լսողական հիշողությունների՝ ժամանակ առ ժամանակ օգտագործման: Մենք այս ուղղությամբ առաջարկում ենք աշխատանքի մի շարք ձևեր, որոնք ուղղորդված են մտավոր գործողություններ կատարելու սովորողների կարողության զարգացմանը, քա-

նի որ հիշողության այս տեսակը հենվում է վերջինիս վրա: Աշխատանքի նման ձևեր կարող են հանդիսանալ առարկաների, երկրաչափական պատկերների, նկարների և այլնի՝ ըստ տարբեր չափանիշների դասակարգումը (ըստ ձևի, չափի, գույնի և այլն):

Ուշադրության ցրվածությունը, դրա պակասը բնորոշ են ընդհանրապես բոլոր կրտսեր դպրոցականներին. այն հիմնականում պայմանավորված է այդ տարիքին բնորոշ հոգեկանի զարգացման առանձնահատկություններով: Անշուշտ, զարգացման խնդիրներ չունեցող երեխաների դեպքում այս խանգարումն աստիճանաբար շտկվում է: Մինչդեռ ուշադրության պակասը, դրա անկայունությունն ու ցրվածությունը մտավոր հետամնացություն ունեցող երեխաներին մշտապես ուղեկցում են: Այս հանգամանքը մեծապես խանգարում է ինչպես ուսումնական գործունեությանն ընդհանրապես, այնպես էլ ուղղագրության յուրացմանը մասնավորապես: Այդ իսկ պատճառով, մենք մշակել ենք նաև գրաճանաչության նախաայբբենական շրջանում աշակերտների ուշադրության զարգացմանն ուղղված աշխատանքների համակարգ:

Մեր աշխատանքները նպատակաուղղված են եղել ուշադրության մի քանի հատկանիշների զարգացմանը՝ ուշադրության ծավալի մեծացում, ուշադրության կայունության զարգացում, ուշադրության տեղափոխում մի օբյեկտից մյուսը և դրա բաշխում: Փորձարարական աշխատանքների ընթացքում համոզվեցինք, որ ուշադրության նշված հատկանիշների զարգացմանն ուղղությամբ մտավոր հե-

տամնաց երեխաների հետ աշխատանքները չափազանց բարդ են և դժվար իրագործելի, քանի որ դրանք մեծապես պայմանավորված են յուրաքանչյուր երեխայի խանգարման խորությամբ, վերջինիս արտահայտվածության աստիճանով, անհատական մի շարք առանձնահատկություններով: Միաժամանակ համոզվեցինք, որ ուշադրության կայունությունն անհրաժեշտ է և հնարավոր է մարզել հատուկ մշակված վարժությունների ու առաջադրանքների, հատկապես խաղերի միջոցով [2]:

Ճիշտ գրելու կարողության նախապատրաստման համար էական է տեսողատարածական ընկալումների և պատկերացումների զարգացման մակարդակը: Հատկապես մտավոր հետամնացություն ունեցող երեխաների համար վերջիններիս համակարգված և նպատակային զարգացումն անհրաժեշտ է թե՛ գրելու կարողության, թե՛ ողջ ճանաչողական գործունեության զարգացման համար: Նշված գործընթացների թերզարգացումը հանգեցնում է տառագրական մի շարք սխալների՝ տառամասնիկների ոչ ճիշտ համադրում տվյալ տառի մեջ (40,2% ցածր դասարաններում, 12,1%՝ բարձրերում), տառաչափերի անհամապատասխանություն (34,2% ցածր դասարաններում, 22,5%՝ բարձրերում), տառերն իրար վրա գրելու սովորություն (15,4% ցածր դասարաններում, 5,6%՝ բարձրերում), շեղումներ տողից (դեպի ներքև, վերև), (31,5% ցածր դասարաններում, 7,6%՝ բարձրերում), տառերի հայելանման գրություն (12,9% ցածրերում և 9,3%՝ բարձրերում), շփոթում են տետրի աջ և ձախ կող-

մերը, վերևն ու ներքևը և այլն:

Դասակարգելով սովորողների թույլ տված տառագրական սխալները՝ մշակել և իրականացրել ենք դրանք շտկելուն նպաստող հետևյալ առաջադրանքները.

1. Տրված են եզրագծված ծանոթ առարկաների անավարտ պատկերներ: Երեխաները պետք է ճանաչեն, անվանեն դրանք ու որոշեն, թե պատկերի որ մասն է բացակայում, և ամբողջացնեն:
2. Տրված են ծանոթ առարկաների պատկերներ: Երեխաները պետք է ճանաչեն, անվանեն դրանք և գունավորեն:
3. Տրված պատկերների վրա ավելորդ գծեր են տարված, երեխաները պետք է ճանաչեն ու անվանեն նկարում պատկերվածը:
4. Մի քանի պատկերներ նկարված են իրար վրա, պետք է ճանաչեն ու անվանեն դրանք: Նույնը կարելի է կատարել առարկաներով:
5. Առաջադրված են տարբեր չափի առարկաների նկարներ: Երեխաները պետք է անվանեն դրանք՝ փոքրից մեծ հաջորդականությամբ:
6. Առաջարկվում են տարբեր գույների առարկաներ, ինչպես նաև գունավոր շերտիկներ: Աշակերտները պետք է յուրաքանչյուր շերտիկ համադրեն համապատասխան գույնի առարկային:
7. Տրված են երկու մասի բաժանված երկրաչափական պատկերներ: Երեխաները պիտի ամբողջացնեն դրանք:
8. Տրված են կիսատ նկարված երկրաչափական պատկերներ (քառակուսի, շրջան, եռանկյունի), երեխաները պետք է ամբողջացնեն դրանք:

9. Ցուցադրվող նկարը ուշադիր դիտելուց հետո պետք է որոշեն, թե որ պատկերն է հեռվում, որն ավելի մոտիկ, հետո դրանք անվանեն ըստ տեղադրության՝ մոտիկից հեռու և հակառակը:

10. Տրված են առանձին մասերի բաժանված նկարներ: Երեխաները, դրանք իրար միացնելով, պիտի ստանան ամբողջական նկարը:

11. Տրված առարկաները դասավորեն մեծից փոքրը (կամ փոքրից մեծը) հաջորդականությամբ: Այնուհետև որոշեն, թե որ առարկան է վերջինը, որը՝ առաջինը, որն է հեռվում, որը՝ առավել մոտ և այլն:

Այս աշխատանքների շղթայում մասնավորապես կարևորում ենք տարածության մեջ կողմնորոշվելու սովորողների ունակության զարգացման անհրաժեշտությունը: Այս ուղղությամբ կազմակերպվող աշխատանքները մտավոր հետամնաց երեխաների հետ սկսում ենք ամենապարզ՝ սեփական մարմնի աջ և ձախ հատվածները տարբերակելու մարզողական վարժություններից, այնուհետև դարձյալ տարաբնույթ վարժությունների միջոցով իրականացնում շրջապատող տարածության մեջ կողմնորոշվելու կարողության զարգացում:

Մարմնի աջ և ձախ հատվածների տարբերակումը պետք է սկսել առաջատար աջ (ձախլիկների դեպքում՝ ձախ) ձեռքի առանձնացումից: Փորձարկել ենք և երաշխավորում ենք դրանց արդյունավետությունը առաջադրանքների հետևյալ համակարգի գործարկման դեպքում.

- Ցույց տալ, թե որ ձեռքով պետք

Է ուտել, գրել, նկարել և այլն: Ասել՝ ինչպես է անվանվում այդ ձեռքը: Դրանից հետո ուսուցիչն առաջարկում է բարձրացնել աջ ձեռքը և անվանել այն:

- Ցույց տալ ձախ ձեռքը: Եթե երեխան չի կարողանում անվանել ձախ ձեռքը, ապա ուսուցիչն ինքն է անվանում, իսկ երեխաները կրկնում են:
- Բարձրացնել մե'կ աջ, մե'կ ձախ ձեռքը, վերցնել մատիտը (գիրքը, տետրը և այլն) աջ (ձախ) ձեռքով:

Աջ և ձախ ձեռքերի տարբերակումից հետո կարելի է անցնել մարմնի մյուս հատվածների տարբերակմանը՝ ոտքերի, աչքերի, ականջների: Այս առաջադրանքներն աստիճանաբար պետք է բարդացնել՝ երեխաներին առաջարկելով աջ ձեռքով ցույց տալ ձախ ականջը, ձախ ձեռքով՝ աջ աչքը, կամ, որ հատկապես բարդ է մտավոր հետամնաց երեխաների համար, աջ ձեռքով ցույց տալ դիմացինի ձախ ոտքը և այլն:

Մարմնի աջ և ձախ հատվածները ճանաչելուց և տարբերակելուց հետո միայն կարելի է անցնել տարածության մեջ կողմնորոշվելու կարողության զարգացման աշխատանքներին: Այդ նպատակով ևս առաջարկում ենք մարզողական վարժությունների համակարգ: Օրինակ՝ թվարկել, թե ինչեր են գտնվում ձեզանից աջ, ձախ և այլն, կամ էլ ուսուցիչն առաջարկում է երեխաներին աջ ձեռքով վերցնել մատիտը, դնել այն գրքի ձախ կողմում և հակառակը, ապա գիրքը դնել դիմացը, գրքի աջ կողմում դնել գրիչը, ձախում՝ մատիտը և այլն:

Ցանկալի է տարածական ընկալման զարգացման աշխատանք-

ները շարունակել տարածության մեջ տարբեր պատկերների դիրքի ճշգրտման ուղղությամբ: Այդ նպատակով մենք իրականացրել ենք հետևյալ վարժությունները.


- Երեխաներին տրվում են իրենց արդեն ծանոթ երկրաչափական պատկերներ (եռանկյունի, քառակուսի, շրջան) և առաջարկվում հորիզոնական գծից աջ տեղադրել շրջանը, ձախ կողմում՝ քառակուսին, իսկ վերևում՝ եռանկյունին և այլն:

Երեխաներին առաջարկվում է կենտրոնում նկարել կետ, կետի աջ կողմում նկարել աստղիկ, ձախում՝ խաչ, վերևում՝ գնդակ, իսկ ներքևում՝ ծաղիկ և այլն: Նման աշխատանքները հետագայում կարելի է անցկացնել տառանշաններով:

Տրամագիր. Մտավոր հետամնացությունն ունեցող սովորողների թույլ տված տառագրական բնույթի սխալները գրավոր խոսքում (փորձ. աշխ. առաջ և հետո)

Ձեռքի մանր մկանների զարգացածության անհրաժեշտ մակարդակի ապահովումը: Հետաքրքրական է, որ այս երեխաների խոշոր մկանների աշխատունակությունը համեմատաբար նորմալ է զարգանում, մինչդեռ մանր մկանները, հատկապես շարժումների կոորդինացիան, որպես կանոն, խիստ տուժած են: Գրաճանաչության նախաայբբենական շրջանը մատների գրամոտորային շարժումների զարգացման և շտկման համար ամենաբարենպաստ ժամանակահատվածն է: Այս շրջանում առաջարկում ենք իրականացնել հետևյալ առաջադրանքների համակարգը.

- մատները գրելուն նախապատրաստող խաղեր և վարժություններ [1,2],



- երկրաչափական տարբեր ծանոթ պատկերների (քառակուսի, շրջան, եռանկյուն), առարկաների (խնձոր, գնդակ, արև, տանձ, գազար և այլն), զարդապատկերների արտանկարում տրված օրինակից,
- նկարել գծիկներ՝ տարբեր ուղղություններով (ուղիղ, թեք), նախ՝ տրված նմուշի վրա, ապա՝ ինքնուրույն,
- տրված ուրվագծված պատկերների գունավորում,
- ուրվագծված պատկերների մկրատով կտրում, հատկապես առանց մկրատը թղթից կտրելու,
- փայտիկներով, երկրաչափական պատկերներով զարդանախշի ստացում,
- ստեղծագործական գործունեության տարբեր տեսակների կիրառում (նկարչություն, ծեփ,

խճանկարի հավաքում, կառուցողական գործունեություն և այլն),

- ասեղնագործում, հյուսք, թելերով խաղեր և այլն:

Վերը նշված բոլոր աշխատանքները կազմակերպելիս պետք է հաշվի առնել այն կարևոր հանգամանքը, որ մտավոր հետամնացություն ունեցող երեխաների մի մասը կարող է ունենալ հնչյունային լսողության արտահայտված խանգարումներ, մյուսը՝ արտահայտված արտասանական թերություններ, որոնք կրում են խիստ կայուն բնույթ, երրորդը՝ տարածական ընկալումների ակնհայտ խաթարումներ և այլն: Հետևաբար, շտկողական աշխատանքները կազմակերպելիս պետք է ցուցաբերել տարբերակված և անհատական մոտեցում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գյուլամիրյան Ջ. Հ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., Ձանգակ-97, 2015, -315 էջ:
2. Գյուլամիրյան Ջ. Հ., Խաղալով սովորենք, Եր., Ձանգակ-97, 2009, -79 էջ:
3. Аксенова А. К. Методика обучения русскому языку в коррекционной школе.-М., Владос, 2002, -320 с.

РЕЗЮМЕ

ПОДГОТОВКА К УСВОЕНИЮ ГРАММАТИЧЕСКИХ УМЕНИЙ ДЕТЕЙ С ЛЕГКОЙ СТЕПЕНЬЮ УМСТВЕННОЙ ОТСТАЛОСТИ

Микаелян А. В.

Ассистент Кафедры родного языка и методики его преподавания Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, кандидат педагогических наук

В статье представлена система подготовительных работ, которая может способствовать повышению продуктивности формирования грамматических умений у детей с умственной отсталостью. В частности, приобретению определенного уровня развития аналитико-сопоставительных умений, фонетического слуха, развитию всех психических процессов: мышления,

памяти, внимания детей с легкой степенью умственной отсталостью. Необходима организация последовательных работ, направленных на зрительное восприятие и распознавание изображений, уточнение и расширение зрительной памяти, формирование пространственных восприятий и представлений, развитие зрительного анализа.

SUMMARY

SPELLING RULES SKILLS PREPARATION OF CHILDREN WITH MENTAL DISORDERS

Mikaelyan A.

Assistant Chair of Armenian Language and its Teaching Methods, Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, Candidate of Pedagogical Sciences

The article presents the system of preparatory activities which can largely promote the increase in productivity of the work directed to the development of spelling abilities in children with mental disorders. Particularly, when working with children with mental disorders, a big role should be given to develop of the following: analytical and synthesizing abilities, gaining certain level of

sound listening, all psychological processes specifically thinking, memory, attention development. Consequent activities should be organized to comprehend and recognize the images with vision, to adjust and enlarge the visual memory, to form spatial comprehension and imagination, to develop visual analysis and synthesizing.